

ըլ... Յետոյ Սաքունդալայի այս զաւկին Պհարադրա անունը գնելով հանդիսապէս օծեց զայն թագաժառանդիր դահուն:

ՑԵՂԵՐՈՒԻ ԽԱՌՆՈՒՐԴԻՆ ԱԶԻՑՑՈՒԹԻՒՆԸ ԵԳԻՊՏՈՍԻ ՄԵՋ



Յաջորդ համառօս տեղիկութիւնը քաղուած է Հռովմայ արքունի Աշխարհագրական Ընկերութեան 1916 փետրուարի պարկէն (Bollettino della R. Soc. Geogr. Serie V. Vol. V. 1 Fehr. 1916 N. 2 էջ 137-138): Ամփափուն է ընդարձակ յօդուածի մը զօր G. Elliot Smith հրատարակած էր Rivista italiana di Sociologia (Fasc. V-VI. 1915) Հռովմայ Ծմբերաբանական Ընկերութեան պարբերական հունդիսին մէջ:



Եզիպտոս՝ ցեղերու խառնուրդին ուսումնական համար, արտակարգ կարևորութիւն ունեցող դաշտ մըն է: Քրիստոսէ առաջ, չորս հազարորդին սկիզբները, Եզիպտոսի տիրեց ժողովորդ մը բոլորովին զերծ օսար տարբերէն որ հինգ կամ վեց դար յետոյ սկսան երկնան զալ:

Նախա - եզիպտոսիք կը պատկանէին թխագոյն ցեղի մը, որ ի սկզբան Միջերկանի բովանդակ հիւսիսային աշփոնը կը բնակէր և յետոյ մէկ կողմանէ տարածուեցաւ արևմտեան հերոսառ միւս կողմանէ Սոմալիա և Հնդկաստան:

Կաւագործութեան մէջ շատ ճարտար էին ու հաւանորէն ոստայնանկութեան և մետաղագործութեան նախկին հնարողներն ըով:

Եղան: Ծնդհակառակն շնչերու և զէնքերու շինութեան մէջ դանդաղ յառաջացան: Այս բան կ'ապացուցանէ թէ միշտ հարկէ չէ որ կը զարգացնէ ճարտարարութեանը:

Եզիպտոս զաղթող նախկին ժողովուրդները - երր տակաւին նախա - եզիպտուցիւ կը սիրէին երկրին - անոնց եղան զոր Լուշան Հայակերպ (Armenoide) կ'անուանէ: Ասոնցմէ ումանց վերին Անասուրիա կը բնակէին, ուրիշներ՝ առաջներէն շատ տարբեր՝ Միջերկրականի, կամմիր ծովուն և Պարսից ծոցին վաճառականութեան մէջ հզորացած էին: Եզիպտոս ասպատակողները այս երկրորդ ճիւղին կը պատկանէին³: Երկու ցեղերու խառնուրդը (amalgama), առաջնին հարատութեան ժամանակ Գիյայի, թէ մարդկային մացորդները և թէ Բուրգերու շրջանին արձանները, նորեկներու մարմանը կազմուածը (fettezza) բռն այրական կը ցուցնեն, մինչդեռ նախա-եզիպտոսից աւելի կանացի էին: Հակառակ աշնչափ օտար արեան խառնուրդի և ծաւալման զոր Բուրգերու շրջանին բաղացականութիւնը այդ խառնուրդով ունեցաւ, անկարելի է զանել զարգացման նիւթական յաւելում մը որ երկրորդ ցեղին պատկան:

Գեղարարեսասական բովանդակ հրաշալի զարգացումը, որ իրենց գալուստին յաջորդեց, ակներեասակէս եզիպտուական նախկին գիւտերու յեղաշըման արդինքն է: Այսուհաները սակայն, նորեկ Հայակերպներու զանկը շատ աւելի մեծ էր բան նախա-եզիպտոցոցը: Նախարիստոսական երեք հազարորդէն սկսեալ, Հայակերպ ցեղին ազգեցութիւնը տարածուեցաւ, մասնաւորապէս միջն թագաւորութեան ժամանակ, նեղոսի հովան մէջ, ու բարձր դասակարգերը խառնուրդին ազդեցութիւնը կրե-

1. Սաբունդալայի այս աւանդապէս նիւթ եղան է նաև Քալիստասայի սթանէւի քերթուածին, կազմելով անէէ ողբերգական թատրոգութիւն մը, զեղեցիկ և ամենայշող մէկ քանի փոփոխութեամբ ու վերածութեա-

ցին։ Սոյն շրջանէն յետոյ ազդեցութիւնը կը սկսի տկարանալ, և նոր թագաւորութիւնը համեմատաբար եղիպատագի անխառն տիպարի մը զօրանալու շրջանին կը հանդիպի։ Նոր թագաւորութեան ասիսկան աշխարհակալութիւնները օտարուսի տարրեր մտուցին Եգիպտոսի մէջ։ Ասորիքի հետ սերտ շփում ունեցան։

Այսկայն, այն ատեն աւելի կարեոր եղաւ եղիպտական քաղաքականութեան ծաւալումը ի նուպիտ։ Հոն եղած քաղաքական զարգացումը, մեծ հակադրութիւն մը (contrasto) կը կազմէ եղիպտականին հետ։ Նուպիոյ մէջ, հուսկ, ստորին սեամորթ ցեղերու ձեռքն անցաւ զերիշխանութիւնը։

Եղիպտական հին թագաւորութեան իշնալով՝ Ասորինները, Հայերը, Յոյնները և Միջներկականի ուրիշ ժողովուրդները Եղիպտոս խուժեցին հոն հաստատուելու։

Այն ատեն ցեղարանական հետաքրքրական իրողութիւն մը առաջ եկաւ, ժողովուրդը նախկին ազգատոհմերու մարդարանական տիպարին վերադարձաւ։

Հ. ՍԲ. Ռ.

ՍՐԻԱՎԱՅՐԻՆ ԿԱՆԹԵՂԸ

ԳԼՈՒԽ Ա.

ԻՒՐ ՃԱՃԱՆՉՆԵՐԸ

Ո առեւ զա չու առոց
առուրդը առոնց, յոր
Արաւած դաւ զաւ զուր-
իս լուսուր եւ քրդ
ար է թրայ էւնոյ իւրաց,
Ցուք իթ. 2, 3.

Առաջիկայ պատութեան զէպքը հանդիպած է անցեալ զարու մէջ։ Պիրեննանց ամենէն աւելի ապառաժուտ խորշերուն մէջ, ոչ այնչափ հեռու սահմանագլխէն Սպանիոյ, կար պատիկ և զիւզական եկեղեցի մը, բլրոյ մը վրայ շինուած, և ճանաչուած ամենամասը մ'ունէր, և ասունակ ամառով, և հին զեղեցիկ գործ մը։ Տիրամոր արտայայտութիւնը հիւնալի քաղցրութիւն և բարութիւն մ'ունէր, և մանուկը այնպիսի կերպարանը մը կը ցուցնէր որ աննկէ աւելի ամենասիրելի և միանգամայն ամենազին չէր կրնար երեակայուիլ։ Մատրան մէշտեղ խորանին առջնը կախուած էր մեծ արծաթեայ կանթեղ մը, ուղղափառ եկեղեցեաց և մատուններու սովորութեան համեմատ, որ զիշեր ցորեկ անլողիատ կը վառէր։ Մարդկէ որչափ որ կը յիշէին, ամենէն աւելի սաստիկ փոթորկի միջոց ալ անիկայ երբէք չէր մարած, և բուն այս բանիս համար ժողովրդեան զերմեռան-դութիւնը կը հայթայթէր անոր առատութեամբ իւղ, այդ լեռներու ձիթենիններէն հանուած ամենամաքուրը, և այս բանը այն բարեպաշտ զիւզացիններէն շատերու համար ամենակարեւոր գործ մ'էր։ Այս

Այս փորբիկ եկեղեցին համեստ պարզութիւն մ'ունէր զուրսէն, բայց հաստա-

տուն շինուած և իւր հնութեամբ նշանաւ, ուր էր Սակայն անոր ներբին կողմը զարդարուած էր շատ հարստութեամբ։ Խորանը կը փայլէր զեղեցիկ արծաթեայ անօթներով։ և երկու կողմերու որմերը զրեթէ ծեփուած էրն ամէն տեսակ ուփական յիշատակներով և հոն կախուած արծաթէ նուէրներով, իրրե երախտազիտութեան նշան մը այն շնորհաց, զորս հաւատացելոց բարեպաշտութիւնը կը սեպականէր ամինօրնեալ Աստուածածոր բարեխոսութեանը, որուն նուիրուած էր այս եկեղեցեակն կամ մատուրը, ինչպէս որ ալ ուզուի բսել։ Յիրաւի, թէ մէկ կողմէն և թէ միւս կողմէն շատ մղոններ հեռաւուրութեամբ զրջակայ բոլոր բնակիչք այս մատուրը մեծապէս կը յարգէին, և զայն կը հոչակէին իրրե մեծ ջերմեռանզութեան տեղ մը և իրրե նպատակ ջերմեռանդն ուխտազնացութեանց։ Բարձրը, բայց խորանին ետեւը, որուն վրայ կ'երևար զեղեցիկ հարուստ տապանակ մը, արծան մը կար անարատ կուսին, իւր Աստուածային որդին զրկին մէջ բռնած։ Ազգանը բնական մեծութեամբ էր, սպիտակ մարմարով, և հին զեղեցիկ գործ մը։ Տիրամոր արտայայտութիւնը հիւնալի քաղցրութիւն և բարութիւն մ'ունէր, և մանուկը այնպիսի կերպարանը մը կը ցուցնէր որ աննկէ աւելի ամենասիրելի և միանգամայն ամենազին չէր կրնար երեակայուիլ։ Մատրան մէշտեղ խորանին առջնը կախուած էր մեծ արծաթեայ կանթեղ մը, ուղղափառ եկեղեցեաց և մատուններու սովորութեան համեմատ, որ զիշեր ցորեկ անլողիատ կը վառէր։ Մարդկէ որչափ որ կը յիշէին, ամենէն աւելի սաստիկ փոթորկի միջոց ալ անիկայ երբէք չէր մարած, և բուն այս բանիս համար ժողովրդեան զերմեռան-դութիւնը կը հայթայթէր անոր առատութեամբ իւղ, այդ լեռներու ձիթենիններէն հանուած ամենամաքուրը, և այս բանը այն բարեպաշտ զիւզացիններէն շատերու համար ամենակարեւոր գործ մ'էր։ Այս